


Երևանյան անշարժ գույքի շուկան 2009թ.-ի Օգոստոսին

2009թ.-ի Օգոստոսին Երևանում վերջին ամիսների ընթացքում առաջին անգամ նկատվեց բնակարանների նկատմամբ կատարված առքուվաճառքի գործարքների քանակական նվազում: 2009թ.-ի օգոստոսին Երևանում բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ կատարվել է 948 առքուվաճառքի գործարք, որի ցուցանիշը նախորդ ամսվա համեմատ նվազել է 5.6%-ով: Մայրաքաղաքում բնակարանների նկատմամբ կատարված առքուվաճառքի գործարքների քանակական նվազումը ուղեկցվեց բնակարանների գանյին նվազմամբ: Չնայած հարկ է նշել որ ինչպես 2009թ.-ի հուլիսին այնպես էլ 2009թ.-ի օգոստոսին բնակարանների գնային նվազումը դրսևորվել է փոքր տոկոսներով. օրինակ Երևանում 1քմ բնակելի տարածքի միջին գինը 2009թ.-ի օգոստոսին գրանցվել է 253,100 ՀՀ դրամ, որի ցուցանիշը 2009թ.-ի հուլիսի համեմատ նվազել է

| Համայնք | 2008 Օգոստոսի ՀՀ դրամ | 2009 Օգոստոսի ՀՀ դրամ | 2009 Հուլիսի ՀՀ դրամ |
|----------|-----------------------|-----------------------|----------------------|
| Կենտրոն | 483,600 | 448,700 | 453,500 |
| Արաբկիր | 412,300 | 342,000 | 346,800 |
| Զեյթուն | 308,400 | 264,900 | 268,300 |
| Նոր Նորք | 278,100 | 214,200 | 217,500 |
| Շենգավիթ | 284,500 | 227,600 | 232,300 |
| Դավթաշեն | 297,700 | 250,600 | 248,100 |
| Մալաթիա | 265,400 | 214,800 | 213,600 |



ընդամենը 1%-ով: Հետաքրքիր է գնային նվազման օրինաչափությունը. Երևանի գրեթե բոլոր համայնքներում սույն թվականի օգոստոսին նախորդ մասվա համեմատությամբ բնակարանների գները նվազել են 1%-ով, մաքսիմալ նվազումը գրանցվել է 2%, որը հանդիպել է միայն Շենգավիթ համայնքում: Իսկ եթե փորձենք համեմատել բնակարանների գնային տվյալները 2009 և 2008թ.-ների օգոստոս ամիսներին ապա կտեսնենք նկատելի տարբերություն: 2009թ.-ի օգոստոսին 1քմ բնակելի տարածքի միջին գինը 2008թ.-ի օգոստոսի համեմատ նվազել է 16%-ով:

Պիկ Ռիելթին անհրաժեշտ են

▲ Վարձակալության համար
երկուսից երեքսենյականոց եվրոպերանորոգված բնակարաններ Երևան քաղաքի կենտրոնում, մինչև 2,000 ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ ամսեկան վարձավճարով: Գերադասելի է բնակարան նորակառույց շենքում:



▲ Վաճառքի համար,
երկու և երեքսենյականոց լավ վերանորոգված բնակարաններ Երևան քաղաքի կենտրոնում:



▲ Վաճառքի համար,
ամենաքիչը 400քմ բաց հողատարածքով և 200քմ շինության մակերեսով առանձնատուն:



FOR RENT



FOR SALE



Վարձակալության և վաճառքի հատուկ առաջարկներ ՊԻԿ ՌԻԵԼԹԻԻ կողմից



Գերազանց բազմանպատակային օգտագործման եռահարկ շինություն գրասենյակային և առևտրային տարածքներով Երևանի փոքր կետրոնում՝ Հերացի փողոցի վրա, 679 քմ ընդհանուր մակերեսով: Վայելէք Ձեր աշխատանքային օրը բարձր դասի գրասենյակում:

Երեքսենյականոց, 125քմ ընդհանուր մակերեսով յուրահատուկ բնակարան Երևան քաղաքի կենտրոնում՝ Կասկադի այգու հարևանությամբ : Լիովին կահավորված և ժամանակակից վերանորոգումով բնակարանն օժտված է ջեռուցման և օդափոխության համակարգերով և ինտերնետ կապով:



Ա-դասի, 147քմ ընդհանուր մակերեսով գրասենյակային տարածք Հյուսիսային պողոտայում: Գրասենյկն օժտված է ժամանակակից ջեռուցման և օդափոխության համակարգերով, արագընթաց ինտերնետ կապով և անվտանգ ստորգետնյա ավտոկայանատեղիով:



Գերազանց բազմանպատակային օգտագործման հողատարածք՝ տեղակայված Երևանի փոքր կետրոնում՝ խոշոր գործարար կենտրոնների և պետական գործակալությունների անմիջական հարևանությամբ, որի վրա հաստատված է գրասենյակային կառույցի նախագիծ:



Եռահարկ շքեղ առանձնատուն 450քմ ընդհանուր մակերեսով Բաղրամյան փողոցի վրա: Լիովին կահավորված և վերանորոգված 7 սենյականոց տունն ունի ջեռուցման, օդափոխության և անվտանգության համակարգեր, ինտերնետ կապ, ինչպես նաև լողավազան և շոգեբաղնիք:



Հարմարավետ երկսենյականոց բնակարան մայրաքաղաքի սրտում՝ Թամանյան փողոցի վրա, հիասքանչ անկրկների տեսարանով: Հիանալի վերանորոգված և լիովին կահավորված բնակարանը ծածկում է 82քմ, ունի ջեռուցման, օդափոխման համակարգեր և ինտերնետ կապ:

